ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ /ՄՔԶՄԿ/ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՔԶՄԿ-Ի ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ/ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնը /այսուհետ՝ ՄՔԶՄԿ/ որպես միջազգային մասնագիտացված կազմակերպություն հիմնադրվել է «Շվեյցարիայի Համադաշնության և Ավստրիայի Հանրապետության միջև Վիեննայում Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի հիմնադրման և գործունեության մասին» 1993թ. հունիսի 1-ի համաձայնագրով:

Ներկայումս ՄՔԶՄԿ-ն ունի 15 անդամ՝ Ավստրիան, Բոսնիան և Հերցեգովինան, Խորվաթիան, Չեխիան, Հունգարիան, Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետությունը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սլովակիան, Սերբիան, Սլովենիան, Բուլղարիան, Շվեդիան և Շվեյցարիան: Կազմակերպության կենտրոնական գրասենյակը գտնվում է Վիեննայում, այն ունի տարածաշրջանային ներկայացուցչություններ Եվրոպայում, Հյուսիսային Աֆրիկայում, Միջին Արևելքում և Լատինական Ամերիկայում, իսկ ՄԱԿ-ում ունի դիտորդի կարգավիճակ: ՄՔԶՄԿ -ն համագործակցում է ԱՊՀ պետությունների հետ, ունի ներկայացուցչություններ Վրաստանում և Մոլդովայում:

Կազմակերպության նպատակը միգրացիայի բնագավառում նորարական, համապարփակ և կայուն քաղաքականությունների մշակումն ու իրականացումն է՝ ուղղված ժամանակին արձագանքման, հիմքային պատճառների դեմ պայքարի, մուտքի վերահսկման միջոցների հարմոնիզացիայի և օտարերկրացիների, ապաստանի և փախստականների հարցերով քաղաքականությունների համակարգմանը:

Կազմակերպությունն ուսումնասիրում է առկա և հնարավոր միգրացիոն հոսքերը դեպի Եվրոպայի ընդունող պետություններ, հետևում և վերլուծում է միգրանտների ծագման հիմնական երկրներում իրավիճակը և մշակում է միջոցներ՝ միգրացիոն շարժումների իդենտիֆիկացման և հսկողության ուղղությամբ:

Կազմակերպությունը ներկայումս համագործակցում է ՀՀ կառավարության հետ՝ իրականացնելով սահմանների կառավարման, անօրինական միգրացիայի և մարդկանց թրաֆիկինգի և միգրացիայի կառավարման ծրագրեր: Մասնավորապես, ՀՀ ՏԿԱԻՆ Միգրացիոն պետական ծառայությունը ակտիվ մասնակցում է միգրացիայի ոլորտում գործող Բուդապեշտյան և Պրահյան գործընթացների շրջանակներում տեղի ունեցող միջոցառումներին (թեմատիկ տարբեր աշխատանքային խմբերի, բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումներ, ուսումնական այցեր, փորձագիտական առաքելություններ, միգրացիոն պրոֆիլի մշակում), իսկ այդ գործընթացների քարտուղարությունն իրականացնում է հենց ՄՔԶՄԿ–ն:

2014թ. դեկտեմբերի 23-ին ուժի մեջ մտած «Աջակցություն միգրացիային և սահմանների կառավարմանը» ԵՄ տեխնիկական աջակցության ֆինանսավորման համաձայնագրով, որի ընդհանուր արժեքը 4 մլն եվրո է, իսկ տևողությունը 3

տարի, նախատեսվում է, որ պետք է իրականացվի ՄՔՋՄԿ-ի՝ Հայաստանում բացվելիք ներկայացուցչության կողմից:

«Աջակցություն միգրացիային և սահմանների կառավարմանը» համաձայնագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից: Առաջին՝ միգրացիա բաղադրիչում նախատեսված են 11 գործողություններ, որոնցից 10-ը ՀՀ ՏԿԱԻՆ Միգրացիոն պետական ծառայության գործառույթների տիրույթում են: Երկրորդ՝ սահմանների կառավարում բաղադրիչով նախատեսվում է իրականացնել 5 գործողություններ, որոնք գտնվում են ՀՀ ազգային անվտանգության ծառայության գործառույթների շրջանակներում:

Համաձայնագրով կարգավորվում են Հայաստանում ՄՔՋՄԿ-ի կարգավիճակի և վերջինիս արտոնությունների և անձեռնմխելիությունների հետ կապված հարցերը: Մասնավորապես՝ ՄՔՋՄԿ իրավունք կունենա հիմնել իր ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետությունում և իր գործունեությունը իրականացնելու համար աշխատանքի ընդունել տեղաբնակ և օտարերկրացի անձնակազմ: Կազմակերպության ներկայացուցչությունը, նրա միջոցները և պաշտոնյաները ՀՀ-ում կօգտվեն դիվանագիտական ներկայացուցչությանը բնորոշ անձեռնմխելիությունից, իսկ իր գործունեությունն իրականացնելու նպատակով ձեռք բերված գույքը կազատվի հարկումից և մաքսատուրքերից:

Կազմակերպության ներկայությունը Հայաստանում կնպաստի ներկա և հետագա ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Նշված համաձայնագրի ստորագրումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականությանը և ստանձնած միջազգային պարտավորություններին:

Ելնելով վերը նշվածից՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապեության կառավարության և Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի /ՄՔՋՄԿ/ միջև Հայաստանի Հանրապետությունում ՄՔՋՄԿ-ի կարգավիճակի մասին» համաձայնագրի ստորագրումը: